ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-18/3 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «8» մայիսի 2018թ.

2018թ-ի մայիսի 8-ը՝ ժամը 10:00-ին, «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ-ի գրասենյակում՝ ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 48/1 , «Սախարով» բիզնես կենտրոնում, տեղի ունեցավ ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-18/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Դիանա	Վարդանյան	«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ ընդհանուր բաժնի պետ.
Աննա	Ավագյան	«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ գործադիր տնօրենի օգնական/գործավար.
Վահան	Ղազարյան	«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ.
Լիլիթ	Վարոսյան	«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ գլխավոր հաշվապահ – հաշվապահական հաշվառման և ֆինանսական պլանավորման վարչության պետ.
Էլլա	Սարգսյան	«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ ֆինանսական պլանավորման մասնագետ-վերլուծաբան:

Հանձնաժողովի նիստին ներկա էր՝

Տիրան Լաճիկյանը	«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ գնումների մասնագետ:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Դիանա Վարդանյանը, իսկ քարտուղարն էր՝ Տիրան Լաճիկյանը:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Դիանա Վարդանյանը, իսկ քարտուղարն էր՝ Տիրան Լաճիկյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-18/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակցի/ների/ կողմից ներկայացված հայտի/երի/՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքների հաստատման մասին:
2. ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-18/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարելու մասին:
3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

1. ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-18/3 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿՑԻ/ՆԵՐԻ/ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ/ԵՐԻ/՝ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Զեկուցեց քարտուղար Տիրան Լաճիկյանը՝ հայտնելով, որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել է ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-18/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-6-րդ չափաբաժնի/ների/ մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի/ների/ ֆինանսական միջոցների հարցման մասին տեղեկատվություն:

Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-18/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին չափաբաժնի/ների/ մասով 1-ին տեղը զբաղեցրած «Նուշիկյան Ասոցիացիա» ՍՊԸ-ի որակավորման չափանիշները բավարարում են հրավերով սահմանված պահանջներին:

Որոշվեց՝

1. Տիրան Լաճիկյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:
2. Հաստատել ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-18/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակցի/ների/ կողմից ներկայացված հայտի/երի/՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման հետևյալ արդյունքները.
1) «Նուշիկյան Ասոցիացիա»՝ բավարար:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

2. ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-18/3 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի՝

Որոշվեց՝

1. ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-18/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին չափաբաժնի/ների/ մասով ընտրված մասնակից հայտարարել «Նուշիկյան Ասոցիացիա» ՍՊԸ-ին:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Տիրան Լաճիկյանը ներկայացրեց պայմանգիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Որոշվեց՝

1. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Դ. Վարդանյան

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Ավագյան

Վ. Ղազարյան

Լ. Վարոսյան

Է. Սարգսյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Տ. Լաճիկյան